61. ԷԽԲԱՋ

Կէղնի թագավորըմ, էդոր լե սատրազամրմ կեր։ Էդ սատրազամի կնիկ շատ խորոտիկ կէղնի։ Թագավորի աչք կընկնի էդ սատրազամի կնիկ։

Կուզե մըհանով մը զէդ սատրազամ կորցնել իտա ու առնե սատրազամի կնիկ։

Կմտածե թե. «Ես ի՞նչ մըհանով զէդի իտամ կորցնել, օր չհասկնա, թե ես ուր կնիկ հ՝ապով զինկ տվեր իմ կորցնել»։

Էդ թագավորին էրկու հատ իրեկ տարեկան ձիու քուռակ կէղնի։ Էրկուս լե մեկ տեսակ. թույ ուրանց մեկ, բոյ ուրանց մեկ, նշան ուրանց մեկ, սուրաթն ուրանց մեկ, հըմալ օր հ՝իրարուց օր չոկիս, չըս գինա տրն է որ, որն է որ։

Ինկ ուրին կմտածե, կասե. «Գտա զմըհանեն. կկանչեմ սատրազամ, քանի օր ինկ սատրազամ է, ուր վզի պարտկն է, կասիմ՝ «Ընծիկ քառասուն չուխտ էդա հըմլա քուռակ կբերիս ընծիկ, օր հ՝իրարուց չչոկվին. օր հ՝իրարուց չոկվին, զգլուխդ կզարկիմ»։

Կանչեց ու ասեց։

Սատրազամ կթալե, կբռնե, «Ջանըմ,— կասե,— ես քառասուն չուխտ մեկ թավուր ձիու քուռակ հ՝ուստե՞ն գտնամ»։ Թագավորի հրաման է, թագավորի խոսք գետին չընկնի։ Կասե. «Ախբր պիտի ես լե էրթամ»։

Կէղնի կէրթա թագավորին կասե.—Տե՛ր իմ, էդ բան չգտնվի, օր գտնվի, փարով կէղնի, ես լե էն խըդար փարա չունիմ, օր իտամ առնեմ։ Դու լե ընծիկ քիչըմ փարա տուր, էրթամ օլըբտիմ, պալքիմ գտնամ, առնեմ հ՝իգամ։

Թագավոր կմտածե.— Ջանըմ,— կասե,— քառսուն ջուխտ քուռակ էդ հ՝ուստե՞ն պիտի գտնա բերե։

Կէլնի խուրճի մը օսկի կիտա, կառնե էրթա։

Սատրազամն է, կէլնի կիտա զէրկու քուռակ հ՝առջև, կթալե զխուրճի օսկին վըր թարկին, կհեծնի զուր ձինն ու կընկնի հ՝էրկիրներ։

Կէրթա կօլըրտի, կօլըրտի հ՝ըռաստ կիգա գեղի մը։ Էդ գեղի մեջ զանկին մարդըմ կեր։ Կէրթա էդ մարդու տուն կիջնի։ Գիշեր էդ տեխ խոնախ կէղնի։ Հ՝իրկուն էդ խոնախի տեր կիշքե օր սատրազամ շատ մատավիր է, նը հաց կերավ, նը կասե, նը կլսե։ Կհարցու, կասե.—Ջանըմ, դու էդ հ՝որի՞ն հըմլա մատավիր իս, քու նըյաթ իսկի չբացվի։

Սատրազամ կասե.—Ասիր իմ քզիկ՝ ֆըլան բան հ՝ապով քեֆ չունիմ, դու ինչ կէնիս, քու ձեռքեն ի՞նչ կիգա։

Մարդն կասե.— Ջանըմ, դու լե ասե տեսնանք ի՞նչ է, հ՝որի՞ կպահիս քու սրտի մեջ։

Կասե.— Իմ թագավոր խազապով է վըր ընծիկ, կուզե զիս կորցու, հաներ է զէդա էրկու ձիու քուռակ, տվիր ընծիկ։ Ասեր է. ընծիկ քառսուն ջուխտ էդա հըմլա ձիու քուռակ կբերիս՝ մեկ թույ, մեկ բոյ, մեկ նշան, մեկ վրեն ֆարխ չէնե, օր էնե՝ զգլուխդ կզարկիմ։ Ես մատավիր չէղնիմ, ո՞ր կէղնի։

— Ատամ,— կասե սատրազամի խոնըխի տեր,— շատ մարախ մ՝ էնի, աստված օղորմած է, քու քեֆին իշքե։

Սիրտ կիտա էդոր, հաց կբերե մեկ լե կուտե, կպառկին, քնին։

Լուսուն օր կելնին, մեկ լե իկրամ ազաթ կէնե, հացից վերջ կառնե, հ՝ելնի գեղի մեջ օլըրտի։

Կառնե օլըրցու դեղի մեջ։ Կտանե ուր թավլեկ։ Հ՝առջին հեղ, կէրթա գոմշնոց։ Սատրազամ ի՞նչ տեսնա։ Կտեսնա օր, էրկու հարիր գոմեշ կապուկ ին հ՝ոդի, հ՝ըմեն մեկ բոյ, հ՝ըմեն մեկ թույ ու մեկ տըրուֆ։

Հոնկուց կընցնի էզներու թավլեն։

Էն լե էն քյազա։

Կընցնի ձիաննոց։ Էն լե էն քյազա։

Կէրթա ձիաններու քուռկներու թավլեն։ Կտեսնա օր քառսուն ջուխտ քուռակ կապուկ կան հ՝ոդի։ Բոլորն էլ մեկ տըրուֆ, մեկ թույ, մեկ նշան։

Էդ մարդն է, կբերե զթագավորի քուռկըներ, կէնե էդ քուռկներու մեջ։ Կասե սատրազամին.—Էկո, ճանչցի։

Սատրազամ կիգա, կտեսնա, կշիվարի մնա, չճանչնա ո՞րն է թագավորի ձիաններու քուռկըտիք, ո՞րն է էդ մարդուն։

— Դը,— կասե,— առ գնա, տուր թագավորին, ազատե ըզքու յախեն։

Բերեց զքառսուն ջուխտ քուռակ ու մեկ լե թագավորի ձիանք, էձ֊գեց էգ մարդու հ՚առջև, ասեց.— Ա՛ռ գնա։

Սատրազամն ասեց.— Ձքու քուռկըներու գին ասե։

Մարդն ասեց.— Իմ քուռկըներուն գին չկա, հըմալ, առանց փարի կիտամ քզիկ, առ ու գնա։

Ինչ օր էրեց, չկառցավ վրեն։ Տվեց առանց փարի սատրազամին զքառսուն ջուխտ քուռակ, առավ էկավ։

Տարավ, տվեց թագավորին։

Թ՚ագավորն օր տեսավ, պաղավ մնաց ու ինկ ուր մեջ մտածեց, ասեց. «Ջանըմ, զէդա չաթին բան դրի էդոր հ՚առջև, էդի գնաց, առավ ու էկավ։ Կէրևա իմ էրած բան աստծու սրտով չէ։ Կանի ես զէդա բան թարկիմ»։

Թ՚արկ տվեց սատրազամի կնկա հ՚ետև հ՚ընկնիլ։ Ու սկսեց սատրա֊զամի հետ մեկ լե զավալկուն խոջ ու բեշ էնել, էրթալ հ՚իգալ։

Հ՚ընցավ մեջտեղ ութ֊տասս տարի. Հոբա ձախորդութենի պես ձա֊խորդութեն մը էկավ էդ զանկին գեղացու վրեն։ Ինչ օր կեր ձեռկ՝ աստ֊վաձ առավ, աղքըտցավ, հ՚ընկավ փողներ, հաց կճարեր։

Օրըմ էդոր կնիկն ասեց.— Մարդ, մենք էդա հ՚երկիր ճայընկնութեն չկըռնանք էնինք, հ՚ըմեն մարդ զմզիկ ճանչըցեր է։ Ընծիկ օր կլսիս, հ՚ելի էրթանք ուրիշ հ՚երկիրըմ ճայինք, հար հ՚իրկում հ՚իգանք նստինք տեխըմ, ուտենք։

Հ՚էլան հ՚ընկան ճամբախ, գացին։ Ճամբու հետ օր կէրթեն, էդ մարդու միտկ հ՚ընկավ ուր սատրազամ։

— Ջանըմ,— ասեց,— ֆըլան օր սատրազամըմ էկավ իմ տում, ես էփեր աղեկութեն մ՝ էրի ուրեն, խեղդելու դռնեն ազատի։ Հ՚էլնիմ էրթամ էնդոր հ՚երկիր, բալքիմ աղեկութեն մը լե էն էնե ընծիկ։

Հարցնելով, փորձելով գնաց զէդ սատրազամի քաղաք գտավ։ Հար֊ցուց սատրազամի տուն լե, ցուցուցին։ Գնաց կանավ դռան հ՚առեջ։

Գացին ասին սատրազամին.— Էրկու ախքատ, մեկն կնիկ է, մեկ լե իրիկ մարդ է, էկեր ին կանի դուռ, կուզեն քու հետ տեսնալ։

Սատրազամ հրաման էրեց թե.— Կանչեք զէդ մարդիկ, թըղ հ՚իգան ներս, տեսնամ ի՞նչ մարդ ին։

Կանչին, հ՚ելավ գնաց։

Գնաց բարև տվեց սատրազամին ու քաշվավ մեկ թարաֆ, կանավ։

Սատրազամ ֆքրավ մեկըմ էգ մարդու վրեն, տեսավ դեմք ուրեն ծանոթ է։ Ասեց. «Ջանըմ, ես զէդա մարդ կճանչնամ ու չըմ ճանչնամ»։ Հարցուց, ասեց.— Մարդ, ես ինչ օր զքզիկ տեսեր իմ, քու դեմք ընծիկ ծանոթ է։ Բըլե էդա քու հալվըներ զիս կխաբե, դու ո՞րն իս։

Մարդն վերուց ասեց.—Տաս տարի հ՝առաջ դու Ֆըլան դեղ, Ֆըլան մարդու տուն խոնախ օր էղար, թագավոր վըր քզիկ խազապ էր էկի, կուզեր զքզիկ սպանել։ Էդա խըդար ձի տվեց քզիկ, տարար տվիր թագավորին, ազատար սպանելուց, քու մի՞տկն է։

Էդ հըմալ օր ասեց, սատրազամի միտկ հ՝ընկավ, ասեց.—Հա, օղորդ է։ Բըլե դու էն մ՝ասի. էդ քու ծով տոլվաթն իմա՞լ էղավ, օր դու հըմլա աղքըտցեր իս, հ՝ընկի փողներ, ճայընկնութեն կէնիս։

Մարդն ասեց.—Սատրազամ բաբա, իմ ձախորդութեն անպատմելի է։ Աստծուց խազապ էկավ վըր ընծիկ, ինչ օր կեր առավ, մեկ լե տեսա զիս աղքատ։ Հ՝ելա ասի էրթամ ուրիշ հ՝երկիրըմ ճարիմ ու ապրիմ։ Էկա ճամբախ հ՝ընկար դու իմ միտկ։ Ասի. Ֆըլան սատրազամին աղեկութեն մը ես էրեր իմ, էրթամ գտնամ զինկ, բալքիմ էն լե զիմ ձեռկ բըռնե։ Էկա, էկա, հ՝ոդա հ՝ելա դուրս։

Սատրազամ հրաման կէնե օր զէդոնկ տանին բաղնեկ, աղեկըմ լվան, թոթվեն, հագուն մեկ-մեկ ձեռք հալավ, առնեն հ՝իդան։

Կառնեն կիդան։

Կասե սատրազամ.— Էդա մարդու էրած աղեկութեն օր էրեց ընծիկ, գին չկեր, հըմկա ես ի՞նչ աղեկութեն էնիմ էդոր աղեկութենի տկեն հ՝ելնիմ։ Կանի տանեմ թագավորին, բալքիմ թագավոր էդոր աղեկութեն մ՝ էնե։

Հ՝էլավ, զէդ մարդ առավ, գնաց թագավորին։ Իմալ օր տեսեր էր, մեկիկ-մեկիկ զէդ մարդու զանկընութեն թարիֆ կէնե ու կասե.—Զէն քառսուն ջուխտ քուռակ էդա մարդն է տվի ընծիկ, օր բերի տվի քզիկ, զփարեն լե չառավ։

Թագավոր կմտածե, կասե.— Զէդի ճամբեք, թըղ էրթա Ֆըլան ջաղաց, էղնի ջաղցըպներուն գլխավոր։

Սատրազամ զէդ օր կլսե, շատ կցավա։ Կասե. «Ջանըմ, ես բերի զէդոնք թագավորին, օր աղեկութեն մ՝ էներ, հըմկա կասե՝ թըղ էրթա Ֆըլան ջաղաց, էղնի ջաղցըպներուն գլխավոր։ Հըմկա իմա՞լ էնիմ ես։ Թագավորին չըմ հ՝իշխնա ասի՝ մը՝ ճամբի էրթա, ես լե չըմ կըռնա վըր թագավորի սենճին քելի, իմա՞լ կէղնի»։ Զեն չհանեց, կախեց զգլուխ, ըռազի էղավ սատրազամ թագավորի էրածի վրեն, ճամբեց զմարդ, գնաց։

Հ՝ելան զէդ մարդ ճամբին, գնաց էդ ջաղացն օր թագավորն էր ասի։

Ջաղցի մեջ օտկ դնելու պես ջաղցի քար սազեց թարս դառնալ։

Ճուհապ գնաց թագավորին ու սատրազամին թե՝ ինչ կասիս, էդ մարդ ջաղաց օտկ դնելու պես, ջաղացի քար սազեր է, թարս կդառնա։

Էդտեխ լե սատրազամ էփեի մարախ էրեց. «Ջանըմ, էդ ի՞նչ է էղի,

օր էդա մարդու գլուխ հըմլա բաներ կէլնի»։

— Աստված դու ինք վերջ զխեր էնիս,—կասե սատրազամ։

Իրեկ չորս տարի մնաց էդ մարդ ջաղաց։

Օր մը լե հ'էլան տեսան օր, ջաղաց սազեր է դըրուստ դառնալ։

Գացին թագավորին ու սատրազամին ասին՝ ջաղաց փոխեց զուր՝ չարխ, հըմկա դրուստ կդառնա։

Թագավոր հ'եբ կհասկնա ջաղաց ըստհաղ շիտակ սազեր է, կբանի, կասե.— Գացեք զէդ մարդն ու սատրազամ առեք, էկեք։

Մարդն հ'եր կիգա, թագավոր կվերու կասե.— Մարդ, դու գինաս ես հ'առաջին հեղ քզիկ մեծ բաշխիջըմ կիտենք, բըլե աստծու վրեն կքիլենք, աստված քինե առեր էր։ Ճամբի, գացիր ջաղաց, հար քու չարխ մեկ լե դառներ վըր հ'ավալկուն։ Հըմկա քու չարխ դառձեր էր, հայդե ֆըլան հ'էրկիր տվի քզիկ, գնա կի, խմե ու քեֆ էրե։

Մարդն հ'էլավ, առավ զուր կնիկ, գնաց ու էն հ'էրկրի մեջ նստավ, քանի սաղ էր, կերավ ու ուրեն քեֆ էրեց։

Էնդոնք հասան ուրանց մուրազին, դուք լե հասնեք ձըր մուրազին։